

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Սիմոնյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 4-րդ մասի՝ կից Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության հարցապնդման պատասխանը:

Առդիր՝ 34 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

Պատասխանում օգտագործվող հասկացություններ և հապավումներ՝

ԱԻՆ՝	Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԱՀ՝	Արցախի Հանրապետություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԲՏԱՆ	Բարձր տեխնոլոգիական արտադրության նախարարություն
ԲՆԱ	Բժշկական նշանակության արտադրատեսակ
Կառավարություն՝	Հայաստանի Հանրապետության կառավարություն
ՀԿ՝	Հասարակական կազմակերպություն
ՀՀ՝	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԶԾ՝	ՄԱԿ-ի զարգացման գործակալություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄՍԾ	Միասնական սոցիալական ծառայության
ՇՏԱԲ՝	2020թ. հոկտեմբերի 2-ին ԱՍՀՆ կողմից ստեղծված միասնական շտաբը
Պատերազմ՝	Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված 44-օրյա պատերազմ
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՏԻՄ՝	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿԵՆ՝	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Ի պատասխան ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի հարցաանդաման

Պատերազմի հետևանքով՝ ԱՀ կառավարությանը և Արցախի քաղաքացիներին աջակցելու նպատակով Կառավարության կողմից իրականացվել է սոցիալ-տնտեսական խնդիրների մեղմմանն ուղղված 20-ից ավելի միջոցառում, ինչպես նաև ԱՀ կառավարությանը հատկացվել է ֆինանսական աջակցություն (միջոցառումների և ֆինանսական աջակցության ընդհանուր բյուջեն կազմել է **շուրջ 156 մլրդ դրամ**), այդ թվում՝

- Արցախի տարածքում 2020 թվականի սեպտեմբերից սկսած բնակչության սպառած էլեկտրաէներգիայի, գազի, ինչպես նաև կապի ծառայությունների ծախսն ամբողջությամբ ֆինանսավորելու համար 2020 և 2021 թվականների ընթացքում պետական բյուջեից **նվիրաբերվել է շուրջ 9.8 մլրդ դրամ**,
- ԱՀ-ի պետական հատվածի աշխատողների վարձատրությունը ֆինանսավորելու, կենսաթոշակառուների և նպաստառուների կենսաթոշակներն ու նպաստները վճարելու, կապիտալ շինարարության և առողջապահական ծախսերը ֆինանսավորելու նպատակով Հայաստանի Հանրապետության 2020 և 2021 թվականների պետական բյուջեից Արցախի կառավարությանը տրամադրվել է **շուրջ 44.7 մլրդ դրամ բյուջետային վարկ**:

Արցախում հաշվառված և փաստացի բնակված բոլոր անձինք եղել են վերոնշյալ ծրագրերի շահառու, իսկ նրանց առանձին խմբեր հանդիսացել են աջակցության մի քանի միջոցառման շահառու՝ ստանալով համապատասխան օժանդակություն:

(հավելված 1-ում ներկայացված են ՀՀ կառավարության կողմից հաստատված աջակցության միջոցառումների, ինչպես նաև ԱՀ կառավարությանը հարկացված ֆինանսական աջակցության վերաբերյալ որոշումները և հակիրճ նկարագիրը)

1. Արդյոք ապահովվել է հնարավորինս լիարժեք և ճշգրիտ տեղեկատվություն՝ Արցախի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն ժամանակավորապես տեղափոխված ընտանիքների թվաքանակի, կազմի, սեռադասարկային կառուցվածքի, ՀՀ-ում ժամանակավոր բնակության վայրի, Արցախում հիմնական բնակության վայրի առկայության և դրանց հասցեների, ինչպես նաև նրանց կոնտակտային տվյալների վերաբերյալ (խնդրում եմ ապանձնավորված մանրամասն տեղեկատվությունը տրամադրել):

Պատերազմի առաջին օրերից տեղահանված արցախցիների հաշվառման և առաջնահերթ կարիքի բացահայտման գործընթացն իրականացվել է համայնքների և պետական հաստատությունների միջոցով: 2020թ. հոկտեմբերի 2-ին ստեղծվել է ԱՍՀՆ Շտաբը, որտեղ աշխատել է ԱՍՀՆ-ի և դրա ենթակա կառույցների աշխատակիցներից ու կամավորներից ձևավորված շուրջ 60 հոգանոց թիմ՝ 24/7 գրաֆիկով:

Միաժամանակ 114 թեժ գիծը ներառվել է Կառավարության 117 միասնական Թեժ գծի համակարգում: Հեռախոսազանգերի միջոցով գրանցվել են տեղեկություններ ինչպես տեղահանված արցախցիների ընտանիքների կազմի, սեռատարիքային կառուցվածքի, այնպես էլ՝ կացարանի, սննդի, հիգիենայի մասին հայտերը:

Թեժ գծի աշխատանքի միջոցով քարտեզագրվել են ԱՀ-ից տեղափոխվածները և պատերազմից տուժած սոցիալական խմբերը՝ ըստ իրենց առանձնահատկությունների, քայլեր են ձեռնարկվել նրանց կարիքների բավարարման ուղղությամբ հրատապ աջակցության տրամադրող գործընկերներ գտնելու և կարիքների հասցեագրումն ուղղորդելու նպատակով:

ԱՍՀՆ նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 30-ի 184-Ա/1 հրամանով Երևանում հիմնվել է քաղաքացիների ժամանակավոր ընդունման և տեղավորման գործընթացները համակարգող տրիաժ կենտրոն: Մասնավորապես Հայ Առաքելական եկեղեցու հետ համագործակցության շրջանակներում տրիաժ կենտրոնը տեղակայվել է Եկեղեցու Հայրորդաց տան՝ Քանաքեռ-Զեյթունի մասնաշենքում: Բացի այդ, տեղահանված արցախցիներին կարճաժամկետ կայանման և ուղղորդման ծառայություն են տրամադրել նաև ԱՍՀՆ ենթակայությամբ գործող՝ Նուբարաշեն վարչական շրջանում գտնվող ՊՈԱԿ-ում:

Ըստ ՏԿԵՆ Միգրացիոն ծառայության՝ պատերազմի ավարտին Արցախից տեղահանվածների թիվը կազմել է ավելի քան 91,000 մարդ (*հավելված 2-ում ներկայացված է թվաքանակի, կազմի, սեռատարիքային կառուցվածքի, ՀՀ-ում ժամանակավոր բնակության վայրի, Արցախում հիմնական բնակության վայրի առկայության վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը*):

Միաժամանակ հայտնում ենք, որ 2021 թվականի մարտի 19-ի ԱՀ նախագահի ՆՀ-1531-Ն որոշմամբ ստեղծվել է Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբի առանձնացված ստորաբաժանում, որը ևս ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ իրականացրել է ԱՀ քաղաքացիների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման աշխատանքների, ինչպես նաև նրանց հաշվառման և վերաբնակեցման խնդիրների համակարգումը և ԱՀ տեղափոխելու կազմակերպումը:

2. Արդյոք ապահովվել է հնարավորինս լիարժեք և ճշգրիտ տեղեկատվություն՝ Արցախյան վերջին պատերազմում զոհված, անհետ կորած, գերի ընկած և վիրավորում ու հաշմանդամություն ձեռք բերած անձանց ընտանիքների վերաբերյալ (խնդրում եմ ապանձնավորված մանրամասն տեղեկատվությունը տրամադրել):

ՀՀ քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչությունում ԱՀ դեմ ագրեսիվ պատերազմ սանձազերծելու և վարելու, միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումներ համարվող արարքներ կատարելու փաստերի առթիվ քննվող քրեական գործի շրջանակներում պարզվել է, որ պատերազմի հետևանքով ԱՀ-ում և ՀՀ-ում զոհված, անհայտ կորած և գերի ընկած զինծառայողների և քաղաքացիական անձանց թվաքանակը կազմում է (22.10.2021թ. դրությամբ)՝

	Զինծառայող	Քաղաքացիական անձ
Զոհված	3712	76
Անհայտ կորած	222	21
Գերեվարված	37	3

Մինչև օրս Ադրբեյջանի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետություն է հանձնվել գերեվարված ընդհանուր թվով 114 զինծառայողներ և քաղաքացիական անձինք:

Ըստ ԱՍՀՆ ՄՍԾ-ի կողմից ներկայացված տվյալների (15.09.21թ. դրությամբ)՝

Վիրավորում ստացած և ստացիոնար բուժում ստացած,	7888
որից հաշմանդամություն ստացած	1464 (113-ը՝ 1-ին, 390-ը՝ 2-րդ, 961-ը՝ 3-րդ խմբի)

3. ՏԻՄ-երի, ՀԿ-ների, սոցիալական խնդիրներով զբաղվող տեղական ու միջազգային կառույցների և սոցիալական աշխատողների ընդգրկմամբ արդյոք իրականացվել է նշված ընտանիքների կարիքների ամբողջական գնահատում (բնակության վայրի, սննդի, հագուստի, հոգեբանական օգնության, կենսագործունեության համար անհրաժեշտ օժանդակ և այլ պարագաների վերաբերյալ և այլն)՝ առկա չափորոշիչների և ուղեցույցերի համաձայն, որի արդյունքում կձևավորվեր լիարժեք պատկեր թե անհրաժեշտ ծրագրերի բովանդակության և թե դրանք իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսների վերաբերյալ (խնդրում են մանրամասն տեղեկատվությունը տրամադրել):

- **ՏԻՄ-երի** կողմից շարունակաբար իրականացվել է ԱՀ-ից տեղահանված անձանց հաշվառում և կարիքի գնահատում, որի հիման վրա ձևավորվել են համայնքներում ժամանակավոր բնակություն հաստատած անձանց ցանկը, այդ թվում՝ սեռատարիքային կառուցվածքը, կացարանի, սննդի, հիգիենայի պարագաների, հագուստի և առողջապահական ծառայությունների կարիքների մասին տեղեկատվությունը:

- **Շտաբի** աշխատանքների շրջանակներում նախարարությունը և դրա ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ները համագործակցել են շուրջ **90 հասարակական կազմակերպությունների** հետ (*հավելված 3-ում ներկայացված է ՀԿ-ների ցանկը*), որոնց մի հատվածն, ի թիվս այլ գործառույթների, ներգրավվել է նաև քաղաքացիների առաջնային՝ հագուստի, սննդի, հիգիենիկ պարագաների և կացարանի կարիքների գնահատման աշխատանքներում:

Վերոնշյալ կազմակերպությունների սոցիալական աշխատողների և հոգեբանների մասնակցությամբ վերհանված կարիքներից ելնելով՝ քաղաքացիներին տրամադրվել է անհրաժեշտ աջակցություն՝

- ժամանակավոր կացարանի ապահովում,
- առաջնային կարիքների բավարարմանն ուղղված միջոցառումներ, մասնավորապես՝ սննդի, հագուստի, տաք ծածկոցների, ջեռուցող տեխնիկայի և առաջնային անհրաժեշտության այլ պարագաների տրամադրում,
- շարունակական վերահսկողության իրականացում:

Շտաբը համակարգել է նաև ԱՀ-ից տեղահանված քաղաքացիներին աջակցել ցանկացող կազմակերպությունների և անհատների հետ աշխատանքը՝ քարտեզագրելով առկա և առաջարկվող ռեսուրսները և ուղղելով դրանք ըստ

նպատակի՝ վերջիններիս կողմից տրամադրվող աջակցությունը դարձնելով հնարավորինս թիրախային և հասցեական:

Ստեղծված **տրիաժ կենտրոնները** ևս իրականացրել են տրիաժին դիմած քաղաքացիների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, տրիաժում գտնվող քաղաքացիների և ընտանիքների առաջնային կարիքների գնահատում և առողջական խնդիրների վերհանում, աջակցել են ՏԿԵՆ միգրացիոն ծառայությանը՝ արցախցիների հաշվառման հարցում: Տրիաժ կենտրոնները զբաղվել են նաև քաղաքացիների տեղավորմամբ՝ հաշվի առնելով վերջիններիս ինքնախնամքի կարողությունները, առողջական խնդիրները, ՀՀ այս կամ այն վայրում տրամադրվող բժշկական կամ այլ ծառայություններին մոտ գտնվելու անհրաժեշտությունը:

- Տեղահանված արցախցիների կարիքների գնահատման հաջորդ փուլն իրականացվել է **ՅՈՒՆԻՍԵՖ-ի** հետ համագործակցությամբ՝ ԱՀ քաղաքացիների հրատապ կարիքների **արագ գնահատման մեթոդաբանության մշակման արդյունքում ստեղծված էլեկտրոնային համակարգի միջոցով**, որը գործարկվել է 2020թ. դեկտեմբեր ամսին: Համակարգի միջոցով սոցիալական աջակցության տարածքային մարմինների աշխատակիցները գնահատել են իրենց սպասարկման տարածքում տեղավորված ԱՀ քաղաքացիների հիմնական կարիքները: Ընդ որում՝ կարիքի գնահատման այդ համակարգը հնարավորություն է ընձեռում բացահայտելու ԱՀ քաղաքացիների բազմակողմանի կարիքները (նյութական, կրթական, առողջապահական, սոցիալական ապահովության իրավունքների իրացման հետ կապված և այլն): Մինչ կարիքի գնահատման գործընթացի մեկնարկը, սոցիալական աշխատողներին բաշխվել են դյուրակիր համակարգիչներ և Քովիդ-19-ի պաշտպանիչ միջոցներ՝ պատշաճ կերպով տնայցերի կազմակերպման նպատակով: Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտն իրականացրել է նշյալ մասնագետների հրահանգավորումը՝ մանրամասնորեն քննարկելով և նրանց ներկայացնելով կարիքի գնահատման էլեկտրոնային գործիքը: Գործիքի միջոցով և սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների և բաժինների աշխատակիցների ուժերով իրականացվել է տեղահանված անձանց կարիքների գնահատում, որոնք հիմք են հանդիսացել ՀԿ-ների և բարերարների աջակցություններն ուղղորդելու հարցում:

Միաժամանակ, 2021թ. հուլիս ամսից ՄՄԾ տարածքային կենտրոնների կողմից մեկնարկել է ԱՀ-ից տեղահանված ընտանիքների **անհատական սոցիալական կարիքների վերագնահատման գործընթացը**՝ նպատակ ունենալով աջակցել ընտանիքներին ժամանակավոր կացարաններից այլ կացարաններ

տեղափոխվելու հարցում, ինչպես նաև հնարավորինս ապահովել նրանց բնականոն կենսագործունեությունը և ընտանիքների զբաղվածության ապահովումը նոր բնակավայրում: ԱՀ-ից տեղահանված ընտանիքներին ժամանակավոր կացարաններից այլ կեցության վայր տեղափոխվելու նպատակով ՄՄԾ-երի տարածքային կենտրոնների մասնագետների կողմից համատեղ իրականացվել է կարիքների գնահատում **«Արցախից տեղահանված անձանց (ընտանիքների) սոցիալական կարիքների խորքային գնահատման» ձևաթղթով:** Կարիքի գնահատումից հետո «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի հետ իրականացվել են անհատական հանդիպումներ, կնքվել կամավոր դուրս գալու համաձայնությունը, որից հետո ՀԿ-ի սոցիալական աշխատողները կատարել են տնայցեր՝ հստակ գրանցելու ընտանիքի վարձակալությամբ տեղափոխվելու փաստը:

- Պատերազմում վիրավորում ստացած անձանց պրոթեզավորումը կազմակերպելու նպատակով ՀՀ ԱՍՀ նախարարի 2021թ. փետրվարի 2-ի N 15-Ա/1 հրամանով ձևավորվել է բազմամասնագիտական թիմ: **Բազմամասնագիտական թիմի** կողմից հատուկ մշակված գործիքներով գնահատվել են ստորին և վերին վերջույթի անդամահատում ունեցող զինծառայողների կարիքները, մասնավորապես՝ պրոթեզների տեսակի, դետալների և անձի շարժունակության ապահովման համար անհրաժեշտ այլ գործոնների, աջակցող միջոցների, մասնագիտական կարողությունների, դրանց վերականգմանն ու վերամասնագիտացմանն ուղղված անհրաժեշտ ծառայությունների համատեքստում: Գնահատման գործընթացի ավարտից հետո պատերազմի հետևանքով վիրավորում ստացած անձանց ֆունկցիոնալ պրոթեզավորումը կազմակերպելու նպատակով ԱՍՀՆ ու «Հայաստան» համահայկական հիմնադրամը փոխըմբռնման հուշագիր են ստորագրել «Աջակցություն վիրավոր զինվորներին և զինվորական հաշմանդամներին» բարեգործական ՀԿ-ի և պրոթեզավորում իրականացնող՝ «Ստեփանակերտի պրոթեզաօրթոպեդիկ կենտրոն», «Ինտերօրթո», «Օրթեզ», «Բարրի Թրեյդ», «Կամար» ՀԿ-ների հետ: Նույն կազմակերպությունների հետ նույնաբովանդակ մեկ այլ հուշագիր կնքել են ԱՍՀՆ-ն ու «Իթերնալ Նեյշն Ֆաունդեյշն Արմենիա» բարեգործական հիմնադրամը:

4. Արդյոք իրականացվել է ներկայումս ՀՀ պետական բյուջեի, ինչպես նաև միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցների շրջանակներում գործող ծրագրերի վերազնահատում, որի արդյունքում կընդունվեին համապատասխան իրավական ակտեր կամ փոխհամաձայնեցված որոշումներ՝ որոշակի ծրագրերի կասեցման, որոշների դադարեցման և ըստ անհրաժեշտության նոր ծրագրերի գործարկման վերաբերյալ (խնդրում եմ մանրամասն տեղեկատվությունը տրամադրել՝ կցելով նաև ընդունված որոշումները, իրավական ակտերը կամ դրանց հղումները):

Արցախում առաջացած հումանիտար աղետին հակազդման, Արցախի բնականոն կենսագործունեության վերականգնման և տեղահանված արցախցիների կարիքները հոգալու նպատակով հետպատերազմյան շրջանում Կառավարության կողմից մշակվել և իրականացվել է 20-ից ավելի աջակցության միջոցառում (միջոցառումները հաստատող որոշումները ներկայացված են հավելված 1-ում):

Միաժամանակ հայտնում ենք, որ Կառավարության մի շարք որոշումներով հաստատված միջոցառումների վերազնահատման շրջանակներում բացահայտվել են խնդիրներ՝ կապված հասցեականության և ոչ հավաստի տվյալների ռիսկի կառավարելիության հետ: Չնայած այն հանգամանքին, որ այդ միջոցառումները արդյունավետ էին որպես հրատապ կարիքի բավարարման արագ արձագանքի միջոցառումներ, սակայն որպես երկարաժամկետ միջոցառումներ դրանք անարդյունավետ էին թիրախայնության տեսանկյունից: Նշված հանգամանքներով պայմանավորված՝ որոշում է կայացվել մի շարք միջոցառումների փոխարեն մշակել նոր միջոցառում, որով ընտանիքներին աջակցություն կտրամադրվի առաջնային կարիքների, այդ թվում՝ կացարանի ապահովման հարցում և միաժամանակ չի վնասի քաղաքացիների զբաղվածության և սոցիալապես ակտիվացման շարժառիթի ձևավորմանը:

Բոլոր աջակցության միջոցառումները պարբերաբար վերանայվել են՝ համաձայն շահառուների կողմից ստացված բողոք-դիմումների. ըստ անհրաժեշտության իրականացվել են փոփոխություններ ՀՀ կառավարության համապատասխան որոշումներում (հավելված 4-ում ներկայացված է որոշումների ցանկը), բարելավվել են շահառուներին գրանցող տեղեկատվական հարթակները:

Պատերազմի հետևանքով վիրավորում ստացած անձանց պրոթեզավորման և աջակցող միջոցների տրամադրման գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով վերազնահատվել և ավելացվել են 2022 թվականի պետական բյուջեի «Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն» ծրագրի «Պետական հավաստագրերով աջակցող միջոցների տրամադրում միջոցառման» ֆինանսական

և ոչ ֆինանսական չափաքանակները:

Միջոցառումների վերագնահատման շրջանակներում ակնհայտ է դարձել զբաղվածության ոլորտում միջոցառումների մշակման անհրաժեշտությունը, ինչի արդյունքում ԱՀ քաղաքացիների ժամանակավոր զբաղվածության ապահովման նպատակով մշակվել են 2 միջոցառումներ՝

- «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով՝ Ադրբեյջանի կողմից 2020թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի ՀՀ գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների ժամանակավոր զբաղվածության ապահովում» միջոցառումը, որի իրականացման կարգը հաստատվել է ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 21-ի N 2119-Լ որոշմամբ:
- «Ադրբեյջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրում» միջոցառումը, որի իրականացման կարգը հաստատվել է ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 21-ի N 2118-Լ որոշմամբ:

Կարևորելով հետպատերազմյան ժամանակահատվածում մարտական գործողություններին մասնակցած անձանց ոչ միայն ֆիզիկական և հոգեբանական ամբողջական վերականգնումը, այլ նաև սոցիալական երաշխիքների, մասնագիտական վերապատրաստման և զբաղվածության ապահովումը, գիտակցելով պետական այդօրինակ քաղաքականության իրագործման հարցում մասնավոր հատվածի մասնակցության, պետության և մասնավոր հատվածի

ներուժի համախմբման կարևորությունը՝ ՀՀ ԲՏԱՆ-ը ՀՀ ԱՍՀՆ հետ կնքել է համագործակցության հուշագիր, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել **«Ռազմիկի հաջողության ուղի» ծրագիրը**, որի նպատակն է աջակցել հայրենիքի սահմանները պաշտպանելիս ռազմական գործողությունների մասնակիցներին և հաշմանդամություն ստացած զինվորներին ձեռք բերել մասնագիտական կողմնորոշում, ստանալ մասնագիտական-տեխնոլոգիական արդի կրթություն, ապահովել փորձաշրջանով բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններում, այնուհետև աջակցել աշխատանքի տեղավորման հարցում և նշված մոտեցումների միջոցով՝ նպաստել նրանց ինտեգրմանը հասարակության մեջ:

Ինչպես նաև ՀՀ ԲՏԱՆ իրականացնում է «**Մասնագետների պատրաստման ԲՈՒՀ-մասնավոր հատված համագործակցություն» ծրագիրը**, որի շրջանակներում ընդունելության փուլը հաղթահարած արցախյան պատերազմների մասնակիցների համար բոլոր բաղադրիչների դասընթացները կլինեն անվճար:

Ինչ վերաբերում է բնակարանային ապահովման հարցին, ապա ԱՍՀՆ կողմից մշակվել է «Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանից տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագիրը և ծրագրի իրականացման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), որը 07.09.2021-23.09.2021թթ. ներկայացվել էր հանրային քննարկման e-draft.am համակարգի միջոցով: Հանրային քննարկմանը ներկայացնելուց հետո տեղի են ունեցել մի քանի հանդիպումներ պոտենցիալ շահառուների հետ, այդ թվում՝ ԱՀ ներկայացուցիչների մասնակցությամբ (Պետական նախարար, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, Օպերատիվ շտաբի պետ):

Պետական գերատեսչությունների կողմից ներկայացված կարծիքների, հանրային քննարկման արդյունքում հավաքագրված առաջարկությունների, ինչպես նաև ԱՀ պետական նախարար Արտակ Բեգլարյանի, «Վերադարձ դեպի Քաշաթաղ» ՀԿ առաջարկությունների հիման վրա Նախագիծը լրամշակվել է, որը նախատեսվում է քննարկել ՀՀ-ում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների հետ և քննարկման արդյունքների հիման վրա ձևավորել Նախագծի վերջնական տարբերակը, որը սահմանված կարգով կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը:

Համաձայն Կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի N 216-Ն որոշման՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ Սյունիքի մարզի սահմանամերձ Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում իրականացվում է բնակելի թաղամասի կառուցման ծրագիր՝ որով նախատեսվում է կառուցել թվով 13 բնակելի տներ՝ պատերազմի արդյունքում տեղահանված ընտանիքների կարիքների համար:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախաձեռնությամբ, մի շարք իրավական ակտերում կատարված փոփոխությունների համաձայն՝ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող հանրակրթական նշանակության օբյեկտների շինարարական ծրագրերում պարտադիր նախատեսվելու է ապաստարանի առկայությունը:

Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ պատերազմի արդյունքում տեղահանված անձանց մարդասիրական կարիքները հոգալու նպատակով լրացումներ են

կատարվել «2021-2025թթ. համար Հայաստան-ՄԱԿ կայուն զարգացման համագործակցության շրջանակ» փաստաթղթում (ստորագրվել է 2021թ. հունիսի 1-ին), ՄԱԿ գործակալությունների, մասնավորապես՝ ՄԱԶԾ, ՄԱԲՀ և ՅՈՒՆԻՍԵՖ-ի՝ Հայաստանի համար ծրագրային փաստաթղթերում:

5. Արդյոք գործարկվել է վստահելի և հաշվետվողական մեխանիզմ՝ մասնավոր հատվածի, ՀՀ-ում և այլ պետություններում բնակվող անհատ քաղաքացիների կողմից կամավոր հիմունքներով ցուցաբերվող օգնությունն ու օժանդակությունը համակարգելու և դրանք առավել հասցեական ու նպատակային դարձնելու համար՝ վերականգնելով պետության նկատմամբ վստահությունը:

Ըստ Կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 5-ի N 1638-Ն որոշման՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև ռազմական դրության գործողության ավարտը ՀՀ ՊՆ, ԱԻՆ, ԲՏԱՆ, ԱՆ կամ այլ պետական մարմինների կողմից, իսկ ռազմական դրության գործողության ավարտից հետո մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը տարերային աղետների և այլ արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման համար ՀՀ ԱԻՆ, ՏԿԵՆ և ԱՆ կողմից «հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով հայտարարագրված ապրանքները, ինչպես նաև «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 145-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ նշված նախարարությունների կամ այլ պետական մարմինների կողմից ՀՀ ՊԵԿ ներկայացված՝ սույն որոշմանը հղում պարունակող դիմումում նշված լինելու դեպքում նաև այլ անձանց կողմից նույն մաքսային ընթացակարգով հայտարարագրված ապրանքները բացթողումից հետո հատկացվում են համապատասխան գերատեսչություններին: Սույն որոշմամբ ՀՀ ՊԵԿ նախագահին հանձնարարվել է իրականացնել բաց թողնված ապրանքների հաշվառում, իսկ վերոնշյալ գերատեսչությունների ղեկավարներին հանձնարարվել է իրականացնել իրենց հատկացված և նախարարության կողմից տնօրինված ապրանքների հաշվառում: Արդյունքների մասին տեղեկատվությունը հանձնարարվել է ներկայացնել ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի գրասենյակ:

Պատերազմի առաջին օրերին մարզերում ստեղծված միասնական պահեստների կողմից ներկայացված հայտերի հիման վրա՝ Մարդասիրական օգնությունը ընդունման-հանձնման ակտերով տրամադրվել է նշված պահեստներին կամ ուղարկվել ԱՀ:

Պահեստներում ամբարվել է պետական, տեղական և միջազգային կառույցների, անհատների կողմից տրամադրվող օգնությունը: Համայնքների կողմից ներկայացված կարիքի գնահատման համաձայն՝ հանձնման և ընդունման ակտերով ստացված օգնությունը տրամադրվել է համայնքապետարաններին: Համայնքների սոցիալական աշխատողների կողմից անհրաժեշտ օգնությունը հասցվել է հասցեատերերին:

Պատերազմի ընթացքում և պատերազմից հետո էլ ԱՆ-ը՝ որպես մարդասիրական օգնություն ստացել է մեծ քանակությամբ դեղեր, ԲՆԱ-ներ և

սարքեր ու սարքավորումներ՝ ՀՀ-ում և այլ պետություններում բնակվող անհատ քաղաքացիների, մասնավոր և դեղագործական ընկերությունների կողմից: Ստացված բեռները ԱՆ «Դեղերի և բժշկական պարագաների ապահովման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարագրվել են «հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգով (համաձայն՝ այդ պահին գործող կարգերի): Դեղերը, սարքերն ու սարքավորումները՝ սահմանված կարգով հանձնվել են ԱՆ-ին: Ստացված բոլոր ապրանքները հաշվառվել են ԱՆ «Դեղերի և բժշկական պարագաների ապահովման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի բազաներում, ըստ պահանջարկների բաշխվել են համապատասխան բժշկական հաստատություններին: Մինչ օրս այս աշխատանքները շարունակվում են, և համաձայն համապատասխան հանձնարարականների իրականացվում են բաշխումներ՝ ըստ ներկայացված պահանջարկների:

6. Արդյոք դիմել եք համապատասխան մանդատ ունեցող միջազգային բոլոր կառույցներին (հատկապես ՄԱԿ-ի մանդատի ներքո գործող), առաջին հերթին ՀՀ-ում գործունեություն իրականացնող ներկայացուցչություններին, ամբողջ աշխարհում մոլեգնող համավարակի ժամանակ թուրք-ադրբեջանական փանդեմի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով առաջացած հումանիտար աղետի հետևանքների մեղմացման ու աստիճանաբար վերացման և իրենց մշտական բնակության վայրերից տեղահանված քաղաքացիների փարրական իրավունքների պաշտպանության նպատակով Հայաստանի Հանրապետությանն օժանդակելու նպատակով գործուն միջոցներ ձեռնարկելու պահանջով:

2020 թվականի նոյեմբերի 30-ին փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի անունից նամակներ են ուղղվել ՀՀ-ում ռեզիդենտ դեսպաններին և միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների ղեկավարներին, որով ներկայացվել է հետպատերազմական իրավիճակը, ստեղծված խնդիրները և այդ պահի դրությամբ Կառավարության կողմից նախաձեռնված աջակցության ծրագրերը: Վերոնշյալ դեսպաններին և միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների ղեկավարներին առաջարկվել է ցուցաբերել հնարավոր մարդասիրական աջակցություն, այդ թվում՝ Կառավարության կողմից նախաձեռնված միջոցառումները համաֆինանսավորելու ձևաչափով: Այնուհետև փոխվարչապետի գրասենյակում տեղի են ունեցել մի շարք աշխատանքային հանդիպումներ միջազգային գործընկերների հետ:

Համատեղ քննարկումների արդյունքում միջազգային մի շարք կառույցներ միացել են պետության կողմից արցախցիներին դրամական աջակցություն տրամադրող միջոցառումներին, ինչպես նաև նախաձեռնել աջակցության նոր միջոցառումներ՝ ՀՀ-ում գտնվող տեղահանված արցախցիների տարբեր խմբերի մասով և տարբեր դրամական չափերով (միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրված աջակցությունների մասին տեղեկանքները ներկայացված են հավելված 5-ում): ԱՍՀՆ-ն խրախուսել է կառույցների աջակցությունը համաձայն իրենց մանդատի և՛ Արցախում, և՛ Հայաստանում՝ ապահովելով գործուն մեխանիզմներ համապատասխան ենթաօրենսդրական ակտերի ընդունմամբ:

Կառավարության կողմից մշակված ծրագրերի համաֆինանսավորման առնչությամբ հարկ է նշել նաև, որ 2020 թվականի դեկտեմբերի 28-ին ՀՀ ֆինանսների նախարարության և ՌԴ ֆինանսների նախարարության միջև համաձայնագիր է ստորագրվել, որով Ռուսաստանի Դաշնությունը **10 մլն. եվրո**

գումարի անհատույց ֆինանսական օգնություն է տրամադրել ՀՀ կառավարության կողմից ՀՀ տարածքում գտնվող Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչության համար իրականացվող ֆինանսական օժանդակության միջոցառումների համաֆինանսավորման նպատակով:

Պատերազմից տուժած անձանց համար օժանդակություն ցուցաբերելու նպատակով Եվրոպական միությունն ավելի քան 10 մլն եվրո մարդասիրական աջակցություն է հատկացրել քաղաքացիական հասարակության, այդ թվում՝ Կարմիր Խաչի միջազգային կազմակերպության միջոցով:

2021թ. մարտի 31-ին ՀՀ ԱԳՆ-ում տեղի է ունեցել արցախահայության առջև ծառայած հումանիտար և սոցիալ-տնտեսական խնդիրների հասցեագրման հարցերին նվիրված միջոցառում, որին հրավիրվել էին ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների և միջազգային կառույցների ներկայացուցիչները: Միջոցառմանը ՀՀ ԱԳ և ԱՍՀ նախարարներն իրենց ելույթներում ընդգծել են առկա առաջնահերթ մարդասիրական խնդիրները և դրանց հասցեագրման հրատապությունը: Միջոցառման ընթացքում ներկայացվել է Արցախից բռնի տեղահանված անձանց հումանիտար աջակցության տրամադրման վերաբերյալ կոչը, որի հիմքով իրականացվել են մի շարք ծրագրեր, ապահովվել է ֆինանսավորում արդեն գործող մարդասիրական ծրագրերի համար:

Պատերազմի առաջին օրերից, ապա նաև զինադադարից հետո, Հայաստանը բարձրացրել է Արցախում միջազգային կազմակերպությունների ներգրավման և հումանիտար աջակցության տրամադրման հարցը՝ առաջնահերթ նպատակ սահմանելով բոլոր տեղահանված անձանց կամավոր, անվտանգ ու արժանապատիվ վերադարձը Արցախ:

Պատերազմի ընթացքում և դրանից հետո ՄԱԿ մարդասիրական մարմինների հետ շարունակաբար քննարկվել է Արցախ մարդասիրական առաքելություն ուղարկելու հարցը: Արցախին ուղիղ օգնություն տրամադրելու առնչությամբ, սակայն, գոյություն ունեն որոշակի բարդություններ՝ առաջնահերթորեն կապված քաղաքական խոչընդոտների հետ: Այս ընթացքում ՄԱԿ Հումանիտար հարցերի համակարգման (OCHA) և ՄԱԿ Փախստականների հարցերով բարձր հանձնակատարի գրասենյակների հետ դիտարկվել են ՄԱԿ մարմինների մասնակցությամբ հումանիտար արձագանքի մի շարք տարբերակներ: Իսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ քննարկվում են Արցախում հայկական ժառանգության պահպանման հարցերը: Քննարկումներն ընթացքում են և մնում են առկախված՝ Ադրբեջանի ապակառուցողական դիրքորոշման հետևանքով: Ադրբեջանի կողմից մարդասիրական առաքելությունները խոչընդոտելու փաստը հրապարակայնորեն

ճանաչվել է ինչպես ՄԱԿ Գլխավոր քարտուղարի մամուլի խոսնակի, այնպես էլ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից:

Հրադադարի հաստատումից հետո Արցախում մարդասիրական աշխատանքներ է շարունակում իրականացնել Կարմիր խաչի միջազգային կազմակերպությունը: Մարդասիրական ծրագրեր են իրականացվել նաև որոշ այլ հումանիտար կազմակերպությունների կողմից:

Նշենք նաև, որ տարբեր մակարդակներում, այդ թվում՝ ԱԳ նախարարի և ՄԱԿ ԳԲ-ի միջև, շարունակաբար քննարկվել է պատերազմից տուժած և Հայաստանում ապաստանած անձանց օժանդակություն տրամադրելու հարցում ՄԱԿ մասնագիտացված կառույցների ներգրավման հարցը:

ՄԱԿ հայաստանյան գրասենյակը պատերազմից տուժածներին մարդասիրական օգնության տրամադրման աշխատանքների համակարգման նպատակով մեկնարկել է նաև ՄԱԿ միջգործակալական արձագանքման ծրագիրը (Inter-Agency Response Plan), որը գործում է 5 ուղղություններով՝ սննդի անվտանգություն, առողջապահություն, մարդկային անվտանգության ապահովում, կացարանների տրամադրում և վաղ վերականգնում:

ՑԱՆԿ

Աջակցության միջոցառումների

	ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՆՅՈՒՆ	Շահառուներ (փաստացի)
1.	2020թ. նոյեմբերի 16-ի N 1800-Ա	Անվճար ուղևորափոխադրումներ՝ Երևան-Գորիս-Ստեփանակերտ: Արցախցիների անվճար ուղևորափոխադրման գործընթացը շարունակվում է. որոշմամբ վերջնաժամկետ սահմանված չէ	47 930
2.	2020թ. նոյեմբերի 16-ի N 1799-Լ	Արցախում հաշվառված կամ փաստացի բնակված անձանց դրամական աջակցության միջոցառում՝ միանվագ 68 հազ. (15 հազ. դրամ հավելյալ ՀՀ-ում անշարժ գույք չունենալու պարագայում)	շուրջ 100,000
	2020թ. նոյեմբերի 18-ի 1813-Լ	Տրամադրման կարգ	
3.	2020թ. նոյեմբերի 21-ի 1820-Լ որոշում	Ադրբեջանի վերահսկողության ներքո անցած Արցախի համայնքների բնակիչներին աջակցության միջոցառում՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամին միանվագ 300 հազ. դրամ	35 341
	2020թ. նոյեմբերի 27-ի N 1891-Լ	Տրամադրման կարգ	
